ՄԱՐԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության տեսության ու պատմության ամբիոնի դասախոս, Հոգեբանական գիտությունների թեկնածու

ՀԱԽՄԱՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Հոդվածում ներկայացվում են շախմատային խաղի ընթացքում երեխաների հոգեկան որակների ձևավորման առանձնահատկությունները, մասնավորապես, շախմատի ներգործությունը ճանաչողական և հուզակամային գործընթացների զարգացման վրա: Այնուհետև հեղինակը դիտարկում է դպրոցում շախմատային դասընթացի կիրառման հիմնական նպատակները: Ներկայացվում են այն գործոնները, որոնք մատնանշում են տարրական դպրոցում շախմատի ուսուցման կարևորությունը:

Հեղինակի կողմից փորձարարական ճանապարհով բացահայտվում են շախմատի դպրոցական դասավանդման յուրահատկությունները, շախմատ առարկայի նկատմամբ մոտիվացիայի շարժընթացը տարրական դասարաններում սովորող աշակերտների մոտ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ շախմատի դասավանդում, տարրական դասարաններ, ճանաչողական գործընթացներ, հուզակամային գործընթացներ, ինտելեկտուալ զարգացում, ինքնարտահայտում, անձի ձևավորում:

Շախմատային խաղը երեխայի ինտելեկտուալ և հոգեբանական զարգացման հիանալի հնարավորություն է: Գաղտնիք չէ, որ տարրական դպրոցում ամենաշատը դժվարություններ են ունենում ոչ թե այն երեխաները, որոնց գիտելիքները և հմտությունները անբավարար են, այլ նրանք, ովքեր դրսևորում են ինտելեկտուալ պասիվություն, ովքեր մտածելու, խնդիրներ լուծելու ցանկություն և հմտություն չունեն:

Շախմատ խաղալով՝ երեխանները նախևառաջ սովորում են ինքնուրույն մտածել և որոշումներ կայացնել: Նույնիսկ ամենապարզ լուծումները (օրինակ, ինչպես խաղաքարով քայլ կատարել), որոնք քիչ կորուստների կարող են հանգեցնել (վատագույն դեպքում՝ պարտության), երեխային սովորեցնում են ինքնուրույն և պատասխանատու լինել: Խաղային փորձառությունը թույլ է տալիս հաշվի առնել ուրիշի տեսակետը, կանխատեսել նրա վարքը և դրա հիման վրա կառուցել սեփական վարքագիծը:

Հանրակրթության ժամանակակից հայեցակարգի հիմքը երեխայի անձի զարգացման, ստեղծագործական ընդունակությունների ձևավորման, անձնային որակների դաստիարակության գաղափարն է: Շախմատային խաղի ուսուցման գործընթացը նպաստում է այս ամենին:

Վ. Ա. Սուխոմլինսկին նշում էր, որ շախմատը հսկայական դաստիարակչական նշանակություն ունի, այն երեխային սովորեցնում է յուրաքանչյուր քայլը կշռադատել, վերլուծել սեփական դիրքը, երևակայել: Մարդիկ, ովքեր մանկությունից սովորում են իրենց քայլերը կշռադատել, հետագայում այդ սովորությունը տեղափոխում են նաև այլ գործերի վրա [8]:

Շախմատը նպաստում է սովորողների հոգեկան որակների ձևավորմա-

նը և դրսևորմանը: Անդրադառնանք շախմատի ներգործությանը ճանաչողական և հուզակամային գործընթացների վրա:

Շախմատային խաղը նպաստում է իրավիճակի օբյեկտիվ, վերլուծահամադրական ընկալմանը, այնպիսի առանձնահատկությունների ձևավորմանը, ինչպիսիք են ընկալման ամբողջականությունը, կառուցվածքայնությունը, իմաստավորվածությունը:

Դաշտի ընկալումը խթանում է տարածական ընկալման ձևավորմանը: Խաղի ընթացքում առարկայի և ֆոնի անընդհատ տեղափոխությունը և հերթագայությունը երեխային թույլ է տալիս դաշտն ավելի լավ ընկալել՝ ուշադրությունը սևեռելով մերթ մեկ, մերթ այլ տեղամասի վրա: Մեծանում է երեխայի ընկալման ծավալը:

Շախմատային խաղը բարերար է ազդում օպերատիվ հիշողության ձևավորման վրա: Այն մարզում է հիշողությունը և հնարավորություն է տալիս մեծացնել հիշողության օպերատիվ միավորների ծավալը՝ միաժամանակ «մտքում» պահելով դաշտում առկա մի քանի իրավիճակներ (քանի դեռ երեխան գործ ունի դրանց հետ):

Շախմատային պարապմունքների ընթացքում երեխան սովորում է ուշադրությունը կենտրոնացնել մեկ գործունեության վրա, նրա մոտ ձևավորվում են կամածին հոգեկան գործընթացները: Խաղային գործունեության մեջ երեխաները ավելի լավ են կենտրոնացնում ուշադրությունը և ավելի շատ ինֆորմացիա են մտապահում:

Ուսումնական գործընթացում հատկապես կարևորվում է հետկամածին ուշադրության զարգացումը [1], և այս հարցում էլ շախմատը մեծ դեր ունի: Անկասկած, շախմատային գործունեությունը նպաստում է կամային ջանքերի միջոցով ուշադրության կենտրոնացմանը, սակայն կրտսեր դպրոցական տարիքում կամային ջանքերի գործադրումն արագ հոգնեցնում է երեխային: Հետկամածին ուշադրությունը կրում է նպատակաուղղված բնույթ և սկզբում կամային ջանքեր է պահանջում, սակայն հետո, երբ երեխան «մտնում» է խաղի մեջ, նրա համար հետաքրքիր և նշանակալի է դառնում ոչ միայն շախմատային գործունեության արդյունքը, այլև բուն գործընթացը: Հետկամածին ուշադրությունը, կապված լինելով գիտակցական նպատակի և հետաքրքրությունների հետ, կամածին ուշադրությունից տարբերվում է նրանով, որ այստեղ կամային ջանքեր չեն կիրառվում, և դրա շնորհիվ ուշադրությունը շատ ավելի երկար ժամանակ է կենտրոնացված մնում: Երբ հետաքրքրություն է առաջանում խաղի նկատմամբ, երեխան առանց կամային ճիգեր գործադրելու (կամ աննշան ճիգերի միջոցով) երկար ժամանակահատվածի ընթացքում «տարվում» է շախմատով:

Շախմատային գործունեությունը բոլոր իմացական գործընթացներից ամենաշատը մտածողության զարգացմանն է նպաստում: Այստեղ առկա են մտածական բոլոր գործառնությունները՝ վերլուծություն, համադրություն, համեմատություն, ընդհանրացում, կոնկրետացում, վերացարկում: Շախմատի դասավանդման ընթացքում ձևավորվում և զարգանում են մտքի որակները՝ մտածողության ինքնուրույնությունը, ճկունությունը, արագությունը, խորությունը, լայնությունը, նպատակաուղղվածությունը, քննադատականությունը, կոմպլեքսային բնույթը, մտքի ինտուիտիվ և տնտեսող բնույթը:

Ինչպես հայտնի է, գործողությունները մտքում կատարելու կարողությունը, ինչն ինտելեկտի զարգացման կարևորագույն գործոն է, ձևավորվում է 7–12 տարեկանում [11], և տարրական դպրոցում շախմատը համարյա իդեալական մոդել է այդ ընդունակության հաջող զարգացման համար: Շախմատ

խաղալիս երեխաները սովորում են ամբողջ իրավիճակը պատկերել մտքում՝ նախքան քայլ կատարելը:

Շախմատային խաղում երեխայի մոտ ձևավորվում է գործողությունների ներքին պլան: Տիրապետելով այդ հմտությանը՝ երեխան կարողանում է պլանավորել իր ժամանակը, մտածելու մարտավարություն մշակել և հասնել դրված նպատակներին: Տարրական դպրոցում երեխաները հաճախ են բախվում այնպիսի խնդիրների հետ, որոնք պահանջում են այս ունակության առկայությունը:

Այսպիսով, շախմատային ուսուցումը նպաստում է տարածության մեջ երեխաների կողմնորոշման զարգացմանը, տարածական երևակայությանը, վերլուծահամադրական գործունեության ձևավորմանը, երեխաներին սովորեցնում է մտապահել, համեմատել, ընդհանրացնել, կանխատեսել սեփական գործունեության արդյունքները, նպաստում է այնպիսի արժեքավոր որակների ձևավորմանն ու կատարելագործմանը, ինչպիսիք են դիտողականությունը, համբերատարությունը, ճկունությունը, հնարամտությունը: Այս բոլոր որակների առկայությունն անհրաժեշտ է տարրական դպրոցում:

Շախմատային խաղի ընթացքում աչքի է զարնում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների դիալեկտիկական միահյուսումը: Սուբյեկտիվ գործոնը երեխայի ինքնահաստատումն է: Հաղթանակի կամքը նպաստում է խաղի օբյեկտիվ աշխարհի ստեղծմանը, որն իր օրինաչափ հարաբերություններով ենթարկում է խաղացողի կամքը: Անձը կլանվում է զարգացող պայքարով, ներգրավվում իրադարձությունների ընթացքի մեջ: Երկու անձանց միջև պայքարը միաժամանակ օբյեկտիվորեն տրված ուժերի պայքար է, օբյեկտիվ օրինաչափության և նաև անձնային ստեղծագործության ուսումնասիրում է պահանջում:

Շախմատն այն աստիճան կենդանի խաղ է, որ ամբողջությամբ կլանում է մարդուն, և պայքարը դառնում է իրական:

Խաղի սուբյեկտիվ դրսևորումներից է, նախևառաջ, մտքի աշխատանքը՝ տրամաբանական մտածողությունը իրար հերթագայող քայլերով: Մարդու միտքն անընդհատ մեկ հնարավորությունից մյուսին է անցնում: Ընդ որում, այդ անցումը պայմանավորված է հակառակորդի ենթադրյալ քայլերով: Խաղացողը մերթընդմերթ սեփական դիրքի գնահատումից հակառակորդի դիրքի գնահատմանն է անցնում:

Մտքի աշխատանքում մշտապես խաչվում են վերացական և կոնկրետ բովանդակությունները: Միտքը, որն ուղղված է վերացական հարաբերություններին, անընդհատ պետք է հիմնվի որոշակի ակնառու պատկերի վրա, որն առկա է շախմատային դաշտում, և այդ դաշտում «գտնի» իր ստուգումն ու արդարացումը: Ֆիգուրները, տարածական հարաբերությունները, որոնք դինամիկ բնույթ են կրում, կլանում են մարդու միտքը:

Շախմատը ձևավորում է երեխայի հույզերը, բարոյական որակները, դաստիարակում է բնավորությունը և կամքը, իսկ ցանկացած սխալ կամ պարտություն զարգացման նոր հնարավորություններ է ընձեռում:

Չնայած խաղի բուն գործընթացը կապված է մի շարք զուտ իմացական խնդիրների հետ և ինտելեկտուալ բնույթ է կրում, այդուհանդերձ, կամքի դերը շախմատային խաղում հսկայական է: Այստեղ ավելի շատ, քան որևէ այլ ստեղծագործական աշխատանքում երևում է կամային ճիգերի հսկայական նշանակությունը, որը կարգավորում է ոչ միայն շարժումները և գործողությունները, այլև ստեղծագործող, ձևավորող, փորձարկող միտքը:

Ի. Դյակովը, Ն. Պետրովսկին, Պ. Ռուդիկը [4] վստահ են, որ «հաղթե-

լու կամքը» ստիպում է մտքին հասնել գերբնական լարվածության, ինչը գերազանցում է նորմալի և թույլատրելիի սահմանները, և հենց այդ պահերն է, որ հաճախ շախմատիստի հոգեկան ճգնաժամի պատճառ է հանդիսանում: Այստեղ հոգեկան ոլորտում տեղի է ունենում նույնը, ինչը ֆիզիկական օրգանիզմի հետ՝ սեփական ուժերը գերազանցող ֆիզիկական պայքարի դեպքում. ինչպես սպորտային մրցումներում օրգանիզմը, նրա կենսական ֆունկցիաները ֆիզիկապես կարող են վնասվել, քայքայվել, այնպես էլ շախմատիստի ինտելեկտը ենթարկվում է կազմալուծման ու քայքայման վտանգի:

Հետևաբար, պետք է խոսել շախմատիստի մոտ ոչ թե ընդհանրապես ուժեղ կամքի, այլ կարգապահ, կարգավարժ կամքի ձևավորման անհրաժեշտության մասին: Հարկ է ընդգծել սեփական ուժերի գրագետ հաշվարկի անհրաժեշտությունը, միտքը գերլարումից ժամանակին պաշտպանելու ունակության կարևորությունը:

Եթե կամքը շախմատում դրսևորվում է որպես բացառապես հաղթանակի հասնելու կամք, ապա սուբյեկտիվ հույզերը լրիվ այլ դեր են կատարում և այլ կերպ են իրենց դրսևորում:

Շախմատում առկա է հարուստ, բուռն, սրված հուզականություն: Ինչպես սեփական, այնպես էլ հակառակորդի յուրաքանչյուր քայլը ուժեղ կամ թույլ հուզական ապրումներ է առաջացնում, քանի որ այն մոտեցնում է հաղթանակին կամ պարտությանը: Այդ հույզերն անմիջականորեն կապված չեն խաղային գործընթացի հետ, հակառակը, որպես կանոն, նույնիսկ խանգարում են խաղին՝ բարդացնելով բանականության և կամքի առանց այդ էլ դժվար վիճակը: Այդուհանդերձ, հուզական ապրումներն առկա են ամեն քայլում: Հույզերը փոխվում են դաշտի վրա յուրաքանչյուր նոր դիրքի, կատարված քայլի հետ: Վստահությունը, բացահայտման ուրախությունը, գոհունակությունը, հպարտությունը, մի խոսքով, դրական ինքնագնահատականը փոխարինվում են զարմանքով, տարակույսով, տագնապով, կատարված թերացումի տհաճության զգացումով, բացասական ինքնագնահատականով, հուսահատությամբ: Խաղի ընթացքում ակտիվության դրսևորումների այնպիսի անցումներ են իրականացվում, որոնք կոփում են մարդու բնավորությունը: Տեղի է ունենում լարված պայքար, որը հաճախ հանգեցնում է տրամադրության անկայունության, տատանումների:

Մ. Ֆելդմանի պնդմամբ [10], շախմատային խաղում հաղթանակը ուժեղ հուզական լիցքեր է հաղորդում խաղացողին, սեփական ինտելեկտուալ ուժերի նկատմամբ վստահություն է տալիս, քանի որ դիրքը ճիշտ է գնահատվել, քայլը ճիշտ է հաշվարկվել, գեղեցիկ լուծում է գտնվել:

Ինքնասիրությունը և անձնային երազանքներն ակտիվացնելով՝ խաղը յուրաքանչյուր պահի դրանք համակցում է ինքնակարգապահության, սոցիալական հմտությունների զարգացման հետ: Հստակ, խիստ կանոնները, հակառակորդի՝ որպես խիստ դատավորի անընդհատ առկայությունը, դիրքերի հերթափոխումը հանգեցնում են ուրիշի Ես-ի հետ սերտ և բազմակողմանի առնչությանը [4]:

Վերջապես, շախմատը սովորեցնում է ստեղծագործել: Ի տարբերություն որոշ դպրոցական դասընթացների, շախմատում հարցերի պատրաստի պատասխաններ չկան: Երեխան սովորում է համադրել մտածական գործընթացները պրակտիկ գործողությունների հետ, ստեղծագործաբար կիրառել պարապմունքների ընթացքում ստացած գիտելիքները, հետաքրքիր լուծումներ գտնել և դաշտի վրա համադրություններ ստեղծել:

Շախմատը ստեղծագործական ինք-

նարտահայտման, ինքնիրականացման, իմացական գործընթացների մարզման, դժվարությունների հաղթահարման, համատեղ աշխատանքի հմտությունների հնարավորություն է տալիս:

Հաճախ շախմատը դիտարկվում է որպես մարդկային հասարակության պարզեցված մոդել. այն իր մեջ համակցում է նորույթի և ավանդականի տարրեր, իրադարձությունների կանխատեսման ունակություն է զարգացնում, ինքնուրույն գործողությունների է դրդում:

Շախմատում տրվում է կենսական մի երևույթի՝ *պայքարի փորձարարական վերարտադրությունը*: Եվ այդ վերարտադրության մեջ ներկայացվում է կենսական գործընթացի էությունը՝ *հակասությունների բախումը*:

Կարծում ենք, որ տարրական դպրոցում շախմատի կիրառման հիմնական նպատակներն են՝

Ինքնահասկացման, ինքնարտահայտման և սեփական անձի դրական ընկալման զարգացում,

Ստեղծագործական և իմաստավորված ժամանցի նկատմամբ հետաքրքրության ձևավորում,

Ուշադրությունը կենտրոնացնելու ունակության և հետկամածին ուշադրության զարգացում,

Հիշողության ամրապնդում,

Երևակայության, մտածողության, մտքի որակների զարգացում,

Կենսական փորձառության նոր ձևերի յուրացում,

Թիմային աշխատանքի և հաղորդակցման հմտությունների զարգացում,

Պլանավորելու և դրված նպատակին հասնելու ունակության ձևավորում,

Իրադարձությունների ընթացքը կանխատեսելու ունակության զարգացում:

Ինչպես գիտենք, Հայաստանի հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում, 2011 թվականից սկսած, դասավանդվում է շախմատ առարկան: Շախմատի մուտքը երկրորդից չորրորդ դասարաններ որոշակի փոփոխություններ մտցրեց դպրոցական «առօրյայում»:

Շախմատի դպրոցական դասավանդման առանձնահատկությունները բացահայտելու նպատակով մենք իրականացրել ենք հետազոտություն՝ կիրառելով դիտման, զրույցի, հարցման մեթոդները: Հետազոտությունն անց ենք կացրել Երևանի թ. 171 հիմնական դպրոցում. մասնակցել են II–IV դասարաններում սովորող 156 աշակերտներ (76 աղջիկ և 80 տղա), ծնողներ, ուսուցիչներ (շախմատի ուսուցիչը և դասվարները):

Կազմել ենք 2 հարցարան, որոնցից մեկն անց ենք կացրել աշակերտների (տես աղյուսակ 1), մյուսը՝ շախմատի ուսուցչի հետ, զրուցել ենք նաև դասվարների և ծնողների հետ: Կատարել ենք տղաների և աղջիկների տվյալների համեմատական վերլուծություն (տես աղյուսակ 2): Հարցարանները հնարավորություն տվեցին բացահայտել տարրական դպրոցի տարբեր դասարաններում սովորող աշակերտների վերաբերմունքը շախմատ առարկայի նկատմամբ:

Աշակերտների հետ անցկացված հարցարանի արդյունքները

	Հարցեր	Պատասխանների տարբերակներ	II դասարան (n=27)	III դասարան (n=27)	IV դասարան (n=24)
			Արդյունքներն արտահայտված են տոկոսներով		
1	Դու հաճույքով ես հաճախում շախմատի դասերին	այո	92,4	81,5	91,7
		ոչ	3,8	11,1	8,3
		չգիտեմ	3,8	7,4	-
2	Եթե քեզ ասեն, որ այսօր շախմատի փոխարեն ուրիշ դաս պետք է անեք, դու կուրախանա՞ս, թե՞ կտխրես	կուրախանամ	23,1	25,9	16,7
		կտխրեմ	76,9	51,9	79,2
		չգիտեմ	-	22,2	4,1
3	Տանը ծնողներիդ պատմո՞ւմ ես շախմատի դասերի մասին	այո	69,2	55,6	79,2
		ոչ	30,8	44,4	20,8
4	Քեզ համար շախմատը հե՞շտ առարկա է, թե՞ դժվար	հեշտ	69,2	37	50
		դժվար	30,8	33,3	20,8
		նորմալ	-	29,7	29,2
5	Լինո՞ւմ են դեպք քեր, երբ դու չես հասկանում կամ մասամբ ես հասկանում շախմատի դասը	այո	50	81,5	70,8
		ոչ	50	18,5	29,2
6	Եղե՞լ են շախմատի այնպիսի դասեր, որոնք քեզ համար շատ հետաքրքիր էին	այո	96,2	100	91,7
		ոչ	3,8	-	8,3
7	Քեզ ավելի շատ դուր է գալիս, երբ ուսուցիչը դա՞ս է պատմում, թե՞ երբ դասընկերոջդ հետ շախմատ ես խաղում	դաս է պատմում	69,3	14,8	25
		շախմատ եմ խաղում	11,5	22,2	37,5
		երկուսն էլ	19,2	63	37,5

8	Պատահե՞լ է, երբ շախմատ խաղալիս պարտվել ես և հուզվել, լաց ես եղել	այո	7,7	7,4	12,5
		ոչ	92,3	92,6	87,5
9	Դու հետաքրքրությամբ ես կատարում շախմատի առաջադրանքները	այո	96,2	63,	70,9
		ոչ	3,8	11,1	8,3
		երբեմն	-	25,9	20,8
10	Շախմատի տնային առաջադրանքներն ինքնուրույն ես կատարում, թե՞ քեզ օգնում են	օգնում են	46,2	63	62,5
		ինքնուրույն	53,8	37	37,5
11	Քո կարծիքով, շախմատի դասերն օգնում են, որ դու ավելի լավ լուծես տարբեր խնդիրներ /օր.՝ մաթեմատիկայից/	օգնում են	65,4	92,6	83,3
		չեն օգնում	34,6	7,4	16,7
12	Շախմատի դասասենյակի լավ կահավորումը, շախմատային պարագաների առկայությունը նպաստում են, որ դու ավելի սիրով հաճախես շախմատի ժամերին	նպաստում են	92,3	48,1	91,7
		չեն նպաստում	7,7	11,1	8,3
		միևնույն է	-	40,8	-
13	Կուզենա՞ս բոլոր դասարաններում անցնել շախմատ առարկան	այո	92,3	51,9	66,7
		ոչ	7,7	44,4	33,3
		չգիտեմ	-	3,7	-

Աղյուսակ 1

Աղջիկների և տղաների տվյալների համեմատական վերլուծություն

	Հարցեր	Պատասխանների տարբերակներ	II դասարան (n=27)		III դասարան (n=27)		IV դասարան (n=24)	
			Արդյունքներն արտահայտված են տոկոսներով					
			Աղջիկներ	տղաներ	Աղջիկներ	տղաներ	Աղջիկներ	տղաներ
1	Դու հաճույքով ես հաճախում շախմատի դասերին	այո	87,5	100	81,8	81,25	90	92,85
		ոչ	6,25	-	18,2	6,25	10	7,15
		չգիտեմ	6,25	-	-	12,5	-	-
2	Եթե քեզ ասեն, որ այսօր շախմատի փոխարեն ուրիշ դաս պետք է անեք, դու կուրախանա՞ս, թե՞ կտխրես	կուրախանամ	25	20	27,3	25	20	14,3
		կտխրեմ	75	80	54,5	50	70	85,7
		չգիտեմ	-	-	18,2	25	10	-
3	Տանը ծնողներիդ պատմո՞ւմ ես շախմատի դասերի մասին	այո	62,5	80	45,5	62,5	90	71,4
		ոչ	37,5	20	54,5	37,5	10	28,6
4	Քեզ համար շախմատը հե՞շտ առարկա է, թե՞ դժվար	հեշտ	62,5	80	27,3	43,75	40	57,1
		դժվար	37,5	20	63,6	12,5	30	14,3
		նորմալ	-	-	9,1	43,75	30	28,6
5	Լինո՞ւմ են դեպքեր, երբ դու չես հասկանում կամ մասամբ ես հասկանում շախմատի դասը	այո	56,25	40	81,8	81,25	80	64,3
		ոչ	43,75	60	18,2	18,75	20	35,7
6	Եղե՞լ են շախմատի այնպիսի դասեր, որոնք քեզ համար շատ հետաքրքիր էին	այո	100	90	100	100	90	92,9
		ոչ	-	10	-	-	10	7,1
7	Քեզ ավելի շատ դուր է գալիս, երբ ուսուցիչը դա՞ս է պատմում, թե՞ երբ դասընկերոջդ հետ շախմատ ես խաղում	դաս է պատմում	68,75	70	18,2	12,5	30	21,4
		շախմատ եմ խաղում	12,5	10	18,2	25	40	35,7
		երկուսն էլ	18,75	20	63,6	62,5	30	42,9
8	Պատահե՞լ է, երբ շախմատ խաղալիս պարտվել ես և հուզվել, լաց ես եղել	այո	6,25	10	-	12,5	-	21,4
		ոչ	93,75	90	100	87,5	100	78,6

9	Դու հետաքրքրությամբ ես կատարում շախմատի առաջադրանքները	այո	93,75	100	63,6	62,5	60	78,6
		ոչ	6,25	-	9,1	12,5	10	7,1
		երբեմն	-	-	27,3	25	30	14,3
10	Շախմատի տնային առաջադրանքներն ինքնուրույն ես կատարում, թե՞ քեզ օգնում են	օգնում են	43,75	50	63,6	62,5	60	64,3
		ինքնուրույն եմ անում	56,25	50	36,4	37,5	40	35,7
11	Քո կարծիքով, շախմատի դասերն օգնում են, որ դու ավելի լավ լուծես տարբեր խնդիրներ /օր.՝ մաթեմատիկայից/	օգնում են	50	90	90,9	93,75	70	92,9
		չեն օգնում	50	10	9,1	6,25	30	7,1
12	Շախմատի դասասենյակի լավ կահավորումը, շախմատային պարագաների առկայությունը նպաստում են, որ դու ավելի սիրով հաճախես շախմատի ժամերին	նպաստում են	93,75	90	36,4	56,25	90	92,9
		չեն նպաստում	6,25	10	-	18,75	10	7,1
		միևնույն է	-	-	63,6	31,25	-	-
13	Կուզենամ բոլոր դասարաններում անցնել շախմատ առարկան	այո	93,75	90	45,5	56,25	40	85,7
		ոչ	6,25	10	45,5	43,75	60	14,3
		չգիտեմ	-	-	9	-	-	-

Աղյուսակ 2

Աշակերտներին ուղղված հարցարանի արդյունքները վկայում են, որ II և IV դասարանցիների գերակշռող մեծամասնությունը (92% և 91%) հաճույքով է հաճախում շախմատի դասերին, իսկ ահա III դասարանում այդ ոգևորությունը պակասում է. ուսուցիչները և ծնողները դա մեկնաբանում են նրանով, որ II դասարանից հետո ծրագրային նյութը կտրուկ բարդանում է:

Ուշագրավ է, որ տանը ծնողներին շախմատի դասերի մասին ավելի շատ պատմում են II և IV դասարանցիները. III դասարանցիների մոտ այդ ցուցանիշը զգալիորեն նվազում է:

Տվյալների համեմատությունը ցույց տվեց, որ տղաներն ավելի շատ են սիրում և մտերիմների հետ քննարկում շախմատ առարկան, քան աղջիկները (բոլոր տարիքներում):

II դասարանի աշակերտների մոտավորապես 69%-ը գտնում է, որ շախմատը հեշտ առարկա է, III դասարանում այդ ցուցանիշը կազմում է 37%, IV -ում՝ 50%:

II դասարանցիների 50%-ը նշում է, որ իրենք երբեմն չեն հասկանում կամ մասամբ են հասկանում շախմատի դասը, III դասարանում այդ ցուցանիշն աճում է մինչև 82%՝ IV-ում նվազելով 71%-ի:

Աղջիկները շատ ավելի, քան տղաները, կարծում են, որ շախմատը բարդ առարկա է, ավելի հաճախակի են այն դեպքերը, երբ աղջիկները չեն հասկանում դասը:

Տղաներից ոմանք փաստեցին, որ չնայած շախմատն իրենց համար բարդ առարկա է, բայց իրենք *կարող են դժվարություններ հաղթահարել*: Ակնհայտորեն տեսնում ենք շախմատի դերը կամային որակների՝ համառության, նպատակասլացության, ինքնուրույնության, վճռականության, պատասխանատվության ձևավորման ու զարգացման վրա:

«Եղե՞լ են շախմատի այնպիսի դասեր, որոնք քեզ համար շատ հետաքրքիր էին» հարցին տրված պատասխանները հակասում են մինչ այժմ նկատվող միտմանը: Եթե II դասարանում 96, իսկ IV–ում 92%–ն է դրական պատասխանել հարցին, ապա III դասարանում բացարձակ՝ 100%–անոց արդյունք է գրանցվել: Սա խոսում է այն մասին, որ չնայած III դասարանցիները շախմատը համարում են բարդ առարկա, այդուհանդերձ, այն հետաքրքիր և գրավիչ է աշակերտների համար:

Արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ II դասարանում երեխաները նախընտրում են շախմատի դասը լսել, քան խաղալ: Եվ դա տրամաբանական է, քանի որ նրանք նոր–նոր յուրացնում են խաղի կանոնները: III և IV դասարաններում պատկերն այլ է. երեխաները հաճույքով և՛ դասն են լսում, և՛ շախմատ խաղում: Ընդ որում, այս հարցում աղջիկների և տղաների կարծիքները համընկնում են:

II և IV դասարանցիները նշում են, որ շախմատային խաղում պարտության դեպքում կարողանում են իրենց զսպել, շատ չվրդովվել: Երեխաներից ոմանք վստահ են, որ մեկ անգամ պարտվելը դեռևս ոչինչ չի նշանակում, քանզի վստահ են, որ հաջորդ անգամ էլ իրենք կհաղթեն: Ոմանք էլ հավելում են, որ շախմատը միայն խաղ է, և պարտությունը չպետք է վիհատեցնի:

Համեմատած II և III դասարանների հետ՝ IV դասարանում ավելի շատ է այն երեխաների քանակը, ովքեր պարտվելիս հուզվում, արտասվում են: Հատկանշական է, որ դրանք բացառապես տղաներ են, աղջիկներից ոչ ոք չի նշել, որ պարտության դեպքում հուզվում է: Շախմատի ուսուցիչը նույնպես նշում է, որ հիմնականում IV դասարանցիներն են պարտության դեպքում կորցնում ինքնատիրապետումը:

Հարց է ծագում. ինչո՞ւ տղաները, ովքեր II, III դասարաններում համեմատաբար հանգիստ են տանում պարտությունը, IV դասարանում բուռն հուզական ապրումներ են ունենում:

Փորձենք հարցին պատասխանել՝ մեջբերելով «Շախմատային խաղի հոգեբանություն» գրքից [4] հետևյալ տողերը. «Եթե մարդը խելացի է, մտածող, տեսաբան, առանձնապես վիրավորական բան չկա այն բանում, որ նա վատ նետաձիգ կամ ձիավոր է կամ նույնիսկ վատ երաժիշտ, նկարիչ, գրող: Երկրագնդի բոլոր նվաճումների մեջ մարդու բանականությունը բարձրագույն և վերին աստիճանն է, որին մենք ապավինում ենք: Եվ ահա, շախմատը բանականության օբյեկտիվ չափն է տալիս, մեզ զրկում է այն հնարավորությունից և իրավունքից, որ ապավինենք ավելի բարձր ու հեղինակավոր որևէ բանի: Պարտության դեպքում ինքնարդարացման հույս չի մնում: Հենց սրա հիման վրա է դրսևորվում սուր հուզականություն ամբողջ խաղի ընթացքում և նաև ավարտից հետո»:

Կարծում ենք, որ IV դասարանցիների տարիքն արդեն թույլ է տալիս գիտակցել, որ մարդու համար էականը (մանավանդ տղաների համար) մտավոր կարողություններն են:

Այն հարցին, թե արդյոք աշակերտները հետաքրքրությա՞մբ են կատարում շախմատի առաջադրանքները, «այո»

պատասխանել է II դասարանցիների 96, III դասարանցիների 63, IV դասարանցիների 71%-ը: Այստեղ նույնպես ակնառու է նույն պատկերը՝ II դասարանցիներին ավելի հետաքրքիր է զբաղվել շախմատով (քանի որ ծրագրային նյութը հասկանում են), քան III և IV դասարանցիներին: Ընդ որում, III դասարանում իրավիճակը ճգնաժամային է, և շախմատի նկատմամբ հետաքրքրությունը հասնում է նվազագույնի:

Տվյալների համադրությունը ցույց տվեց, որ III դասարանի համեմատ IV դասարանում տղաների մոտ շախմատի նկատմամբ հետաքրքրությունը զգալիորեն աճում է (63-ից հասնելով 79%-ի), իսկ աղջիկների մոտ այդպես էլ աճ չի գրանցվում (ավելին, 64-ից իջնում է 60%-ի):

Հարցարանի արդյունքները փաստում են (աղջիկների և տղաների տվյալները նույնն են), որ II դասարանցիների մոտավորապես կեսը շախմատի տնային առաջադրանքները կատարում է ինքնուրույն, III և IV դասարաններում աշակերտների մեծ մասին օգնում են: Ուսուցիչը նշում է, որ առաջադրանքներն ինքնուրույն կատարողների մի մասը շախմատի խմբակ է հաճախում: Աշակերտների մայրերն էլ հավելում են, որ իրենցից ոչ բոլորը շախմատ խաղալ գիտեն և տնայինները կատարելիս ստիպված օգնության են կանչում հայրերին ու պապիկներին:

Հետազոտության արդյունքում պարզվեց, որ թեև III դասարանում շախմատ առարկայի նկատմամբ հետաքրքրությունը խիստ նվազում է, այդուհանդերձ, ամենաշատն այս տարիքի երեխաներն են նշում, որ շախմատի դասերն իրենց օգնում են մաթեմատիկական և ամենատարբեր կենսական խնդիրներ լուծելիս: IV դասարանում ևս այդ դրական միտումը պահպանվում է: IV դասարանցիներից մեկն արդարացիորեն նշում է. «Շախմատային գիտելիքները կյանքում ինձ անհրաժեշտ են: Ինչպես շախմատային պարտիայի ընթացքում պետք է ամեն ինչ պլանավորել, այնպես էլ կյանքում ամեն գործ սկսելիս պետք է նախապես ծրագրել, նախապատրաստվել»:

Ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, II և IV դասարանցիները հավասարապես (92%) գտնում են, որ դասասենյակի լավ կահավորումը, շախմատային պարագաների առկայությունը տրամադրում և նպաստում են, որ իրենք ավելի սիրով հաճախեն շախմատի դասաժամերին: Սա խոսում է դպրոցական արտաքին մոտիվացիայի առկայության մասին: Ի դեպ, համաձայն նախկինում մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքների, տարրական դասարանցիների կեսն ունի դպրոցական արտաքին մոտիվացիա, այսինքն՝ դպրոցը նրանց գրավում է իր արտաուսումնական կողմերով [3, էջ 34]:

III դասարանում, հետաքրքրության համընդհանուր անկման պայմաններում, այդ ցուցանիշն իջնում է 48%-ի:

«Կուզենա՞ս բոլոր դասարաններում անցնել շախմատ առարկան» հարցին դրական են պատասխանել II դասարանցիների 92, III դասարանցիների 52, IV դասարանցիների 67%-ը: Այս տվյալները մեկ անգամ ևս ցույց են տալիս շախմատ առարկայի նկատմամբ վերաբերմունքի շարժընթացը տարրական դասարաններում:

Ուսուցիչների հետ անցկացված հարցման արդյունքները հիմնականում համընկնում են աշակերտների պատասխանների հետ: Շախմատի ուսուցչի կարծիքով, յուրաքանչյուր դասարանում միջինը 5-6 հոգի շախմատից կարող է համարվել «ուժեղ», և մոտավորապես նույնքան աշակերտ էլ չեն հասկանում կամ մասամբ են հասկանում նյութը: Ուսուցչի գնահատմամբ, II դասարանում մատուցվող նյութը հեշտ է և լավ է յուրացվում, III և IV դասարանցիների ծրագիրը բարդ է և դժվարությամբ է ընկալվում: Նա նաև հավելեց, որ շախմատը մեծապես նպաստում է երեխաների կարգապահությանը,

հաղթելու կամք է ձևավորում, զարգացնում է տրամաբանությունը, մտքի որակները, երևակայությունը:

Ե՛վ շախմատի ուսուցիչը, և դասավարները նշեցին, որ հիմնականում 2 տիպի խնդիրներ կան՝ կապված շախմատի դասավանդման հետ. ցանկալի է, որ

Շախմատ առարկան ոչ թե գնահատվի նիշերով, այլ ստուգարքային լինի: Ընդ որում, նմանատիպ խնդրանքով նրանց մոտենում են նաև բազմաթիվ ծնողներ:

Շախմատ առարկան անցնեն ավելի բարձր դասարաններում, որպեսզի երեխաները հեշտ և արագ ընկալեն մատուցվող նյութը: Եվ արդյունքում շախմատի նկատմամբ մոտիվացիան ավելի բարձր կլինի:

Ի. Գ. Սուխինը «Շախմատի դասընթացը տարրական դպրոցում» հոդվածում [7] ընդգծում է. «Կրտսեր տարիքում երեխաներին շախմատ սովորեցնելիս պետք է կարևորել ոչ թե ինքնին խաղը, այլ մտածված ձևով կառուցված ուսուցումը, որը մատչելի կլինի յուրաքանչյուր տարիքային խմբի համար: Շախմատի ուսուցումն ինքնանպատակ չէ, ուսուցման ընթացքում պետք է լիովին կիրառել շախմատի զարգացնող ներուժը»:

Այսպիսով, ամփոփելով հոդվածը՝ նշենք հիմնական եզրահանգումները.

Շախմատը դրական է ներգործում երեխայի հոգեկան գործընթացների կատարելագործման վրա. այն նպաստում է երեխայի *իմացական գործընթացների*՝ ուշադրության, ընկալման, հիշողության, մտածողության, երևակայության զարգացմանը, *հուզակամային գործընթացների*՝ հույզերի, բարոյական որակների, կամքի ուժի, ինքնատիրապետման, համառության, տոկունության ձևավորմանը, *անձնային որակների*՝ ինքնավստահության, ինքնահաստատման, պատասխանատվության, ժամանակի պլանավորման զարգացմանը:

Շախմատը նպաստում է մտքում գործողություններ կատարելու կարողության ձևավորմանը: Այն ստեղծագործական գործընթաց է, որը երեխային ստիպում է աճել և զարգանալ:

Շախմատային խաղում դրսևորվում է հոգեկան գործառույթների անսովոր բազմազանություն: Ընդ որում, դրանք բոլորը մարզվում են ոչ թե առանձին-առանձին, այլ *համադրության* մեջ, ինչը բնութագրական է բնական կենսական իրավիճակներին:

Շախմատային խաղը երեխայի համար պրակտիկ գործունեություն է, որն անհրաժեշտ է դպրոցական տեսական դասընթացների առատության մեջ:

Շախմատ առարկայի նկատմամբ մոտիվացիան ամենաուժեղը II դասարանում է, III դասարանում այն կտրուկ անկում է ապրում, IV դասարանում կրկին բարձրանում է, այնուամենայնիվ՝ չհասնելով II դասարանի մակարդակին:

Թեև III դասարանում շախմատի նկատմամբ հետաքրքրությունը նվազում է, սակայն հենց այս տարիքի երեխաների կարծիքով է, որ տարբեր կենսական իրավիճակնում, «ոչ շախմատային» տիպի խնդիրներ լուծելիս իրենց պետք են գալիս շախմատային գիտելիքները:

II դասարանցիների գերակշռող մասը գտնում են, որ դասասենյակի լավ կահավորումը և շախմատային պարագաների առկայությունը նպաստում են, որ իրենք սիրով հաճախեն շախմատի դասերին: III դասարանում այդ ցուցանիշը նվազում է. աշակերտները սկսում են զգալ, որ շախմատի դասերը հասկանալն ավելի կարևոր է, քան դասասենյակի կահավորումը:

Կրթություն տալուն զուգահեռ դպրոցի հիմնական գործառույթներից մեկը անձի ձևավորմանը նպաստելն է [2]: Այս առումով շախմատ առարկան ամենաբարերար ազդեցությունը կարող է թողնել աշակերտների վրա՝ նպաստելով նրանց անձնային զարգացմանը, կամային որակների ձևավորմանը, մտքի ճկունությանը, ինքնահաստատմանը, պրոբլեմային իրավիճակներում ար-

դյունավետ, կառուցողական լուծումներ որոնելուն և բացահայտելուն:

Շախմատային խաղում ներդաշնակորեն միահյուսված են դաստիարակչական, կրթական, մրցակցային, ստեղծագործական և հաղորդակցական տարրերը:

Միայն այն փաստը, որ շախմատը նպաստում է երեխայի հոգեկան գործընթացների ձևավորմանը, բավարար չէ՝ վստահ լինելու համար, որ շախմատ առարկան արդյունավետ է գործում դպրոցում. անհրաժեշտ է ծրագրային նյութը լրջագույնս համապատասխանեցնել երեխաների՝ տվյալ տարիքին բնորոշ իմացական հնարավորություններին: Շախմատային խաղի՝ մեթոդական առումով գրագետ ուսուցումը (համաձայն Լ. Ս. Վիգոտսկու այն թեզի, որ ուսուցումը պետք է մեկ քայլ առաջ անցնի զարգացումից) երեխաների մտավոր զարգացման արդյունավետ միջոց կարող է լինել:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 30.12.2014

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դանիելյան Մ., Միքայելյան Վ., Միքայելյան Հ. Հոգեկան երևույթները մաթեմատիկայի դասավանդման ընթացքում. ուշադրություն, «Մաթեմատիկան դպրոցում», Գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2000, 5-6 (14-15), էջ 53-66:
2. Միքայելյան Մ., Զաքարյան Է. Անձնային զարգացումը որպես դպրոցի կարևորագույն գործառույթ, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» IV Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, Էդիթ Պրինտ հրատ., 2013, էջ 147-150:
3. Միքայելյան Մ., Զաքարյան Է. Դպրոցական հարմարման հոգեբանական առանձնահատկությունները հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում, «Հոգեբանությունը և կյանքը», Երևան, Զանգակ հրատ., 2013 (1-2), էջ 33-41:
4. Дьяков И., Петровский Н., Рудик П. Психология шахматной игры. На основе психотехнических испытаний участникова международного шахматного турнира в Москве в 1925 году. Москва, Издание авторов, 1926, 159 с.
5. Комаров Д. Д. Развитие интеллектуальных способностей и социальная реабилитация психически больных и умственно отсталых с помощью шахмат. Вестник ассоциации психиатров Украины, №3-4, Киев, 2001, сс. 208-211.
6. Комаров Д. Д., Жестерев А. А. Использование шахмат для социальной адаптации детей и подростков с интеллектуальной недостаточностью. http://www.chess555. narod.ru/r_ komarov2.htm
7. Маклаков А. Г.Общая психология, СПб, Питер, 2008, 583 с.
8. Сухин И. Г. Шахматный курс в начальной школе: история становления, Первая Российская конференция тренеров и организаторов детских шахмат «Догомыс – 2003», Набережные Челны, сс. 150-154.
9. Щербатых Ю. В. Общая психология, СПб, Питер, 2008, 272 с.
10. Фельдман М. От шахмат – к хорошему самочувствию, «Народное образование», №2, Тобольск, 1998, сс. 93-95.
11. http://www.bukov-ka.ru/?p=66
12. http://www.nikolacha.ru/shaxmatyi
13. http://www.perseybaby.ru/shahmaty_1/

ВЛИЯНИЕ ПРЕПОДАВАНИЯ ШАХМАТ НА ФОРМИРОВАНИЕ ПСИХИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ РЕБЕНКА

МАРИНЕ МИКАЕЛЯН

Преподаватель кафедры теории и истории психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат психологических наук

В шахматной игре проявляется необычайное разнообразие психических функций, тренируемых не отдельно, а в совокупности. Шахматы позитивно влияют на усовершенствование психических процессов и способствуют развитию внимания, восприятия, памяти, мышления, воображения, силы воли, самоконтроля, ответственности, способности планировать временя, формируют нравственные качества ребенка. Шахматы – это эффективная модель для формирования у ребенка механизма “действия в уме”, что является важнейшим фактором развития интеллекта.

В преподавании шахмат важное значение имеет обдуманно построенное обучение, доступное для каждой возрастной группы. В процессе обучения в полной мере должен использоваться развивающий потенциал шахмат.

Дата представления статьи: 30.12.2014

INFLUENCE OF TEACHING CHESS ON THE FORMATION OF CHILD’S PSYCHIC QUALITIES

MARINE MIKAELIAN

Lecturer at the Chair of Theory and History of Psychology, Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, PhD in Psychology

An extraordinary variety of psychic functions is manifested in the game of chess, which are not trained individually. Chess influences positively on the improvement of mental processes and contributes to the development of attention, perception, memory, thinking, imagination, willpower, self-control, responsibility, time management, forms emotions and moral qualities of the child. Chess as an effective model for the formation mechanism of the child “acts in the mind”, which is an important factor in the development of intelligence. However, in the teaching of chess not only the game itself is important, but also deliberately constructed learning, which will be available for each age group. The learning process should be fully utilized to develop potential of the learners.

Article submission date: 30.12.2014